Հ Ր Ա Մ Ա Ն N 9-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«19» ՀՈՒՆՎԱՐԻ 2021 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՍՆՆԴՈՎ, ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԵՎ ԳԻՇԵՐԱԿԱՑԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԵՆՅԱԿՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմքում ունենալով ՀՀ փոխվարչապետի 2020 թվականի օգոստոսի 6-ի N 477-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝ քրեակատարողական ծառայության հանրային ծառայողներին հատուկ ուսուցման դասընթացների իրականացման ընթացքում (դասախոսությունների և գործնական պարապմունքների իրականացման օրերին՝ դասացուցակին համապատասխան) սննդով, տրանսպորտով և գիշերակացի համար նախատեսված սենյակներով ապահովվելու կարգն ու պայմանները՝ համաձայն սույն հրամանի հավելվածի և աղյուսակի:

1/20/2021

X

Rustam Badasyan

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Հավելված
Արդարադատության նախարարի
2021 թվականի հունվարի 19-ի
N 9-Լ հրամանի

ԿԱՐԳ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՍՆՆԴՈՎ, ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԵՎ ԳԻՇԵՐԱԿԱՑԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԵՆՅԱԿՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ

1. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Ուսումնական հաստատություն) քրեակատարողական ծառայության հանրային ծառայողներին (այսուհետ՝ ծառայող) հատուկ ուսուցման դասընթացների իրականացման ընթացքում (դասախոսությունների և գործնական պարապմունքների իրականացման օրերին՝ դասացուցակին համապատասխան) ապահովում է սննդով, տրանսպորտով և գիշերակացի համար նախատեսված սենյակներով՝ սույն հավելվածով նախատեսված կարգով ու պայմաններին համապատասխան:

2. ՀՀ ԱՆ «Գորիս», «Արթիկ», «Սևան», «Վանաձոր» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների ծառայողները, հատուկ ուսուցման դասընթացների իրականացման ընթացքում՝ իրենց ցանկության դեպքում, հնարավորություն ունեն անվճար գիշերելու Ուսումնական հաստատության ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 շենք հասցեում գտնվող գիշերակացի սենյակներում (կացարաններում): Ուսումնական հաստատությունը գիշերակացով մնացող ծառայողներին տրամադրում է մեկ հատ չոր օճառ (առնվազն՝ 100 գրամ) և մեկ հատ զուգարանի թուղթ (առնվազն՝ 20 մետր երկարության):

3. Ուսումնական հաստատությունը՝ հատուկ ուսուցման դասընթացների իրականացման ընթացքում, ապահովում է ծառայողների ուղևորափոխադրումը՝ Երևան քաղաքից դեպի Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 շենք հասցե և հակառակը՝ դեպի Երևան քաղաք՝ ծառայողների ցանկության դեպքում:

4. Ուսումնական հաստատությունը՝ հատուկ ուսուցման դասընթացների իրականացման ընթացքում, ծառայողներին ապահովվում է սննդով՝ սույն հավելվածի աղյուսակով սահմանված ճաշացանկին համապատասխան:

Աղյուսակ
Արդարադատության նախարարի
2021 թվականի հունվարի 19-ի
N 9-Լ հրամանի հավելվածի

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԵՐԻՆ՝ ԴԱՍԱՑՈՒՑԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ) ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՆՆԴԻ ՃԱՇԱՑԱՆԿ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
1-ին աշխատանքային օր 1. Վարսակի շիլա՝ 200գր., սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ ՝ 200մլ, կարագ (սերուցքային 82% յուղայնությամբ)՝ 30գր, ջեմ (մրգային՝ առնվազն 2 տարբեր տեսակի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.: 2. Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ: 3. Սպաս՝ 400գր, հնդկաձավարով փլավ՝ 250գր, կոտլետ (տավարի մսով)՝ 150գր, աղցան «Կորեական»՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.: 4.Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ: 5. Վերմիշելով փլավ՝ 200գր., նրբերշիկ հավի՝ 2 հատ, լուծվող սուրճ կամ սև և (կամ) կանաչ թեյ՝ 200մլ, թխվածք (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա)՝ 100գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր: 2-րդ աշխատանքային օր 1. Ձվածեղ՝ երկու ձվից պատրաստված., սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ (սերուցքային 82% յուղայնությամբ)՝ 30գր, ջեմ (մրգային՝ առնվազն 2 տարբեր տեսակի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:. 2.Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ: 3.Բորշ (տավարի մսով) ընդհանուր 500գր՝ 350գր. ապուր, 150գր. փափուկ միս, կարտոֆիլի խյուս՝ 400գր, կաղամբով աղցան՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր. 4.Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ: 5. Բրնձով փլավ՝ 200գր.,տապակած հավի կրծքամիս 150 գր., լուծվող սուրճ կամ սև և (կամ) կանաչ թեյ ՝ 200մլ, թխվածք (բիսկվիթային խմորից պատրաստված և /կամ/գաթա)՝ 100գր,

բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր:
3-րդ աշխատանքային օր
1.Սպիտակաձավարի շիլա՝ 200գր., սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ ՝ 200մլ, կարագ (սերուցքային 82% յուղայնությամբ)՝ 30գր, ջեմ (մրգային՝ առնվազն 2 տարբեր տեսակի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
2. Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ:
3. Հավով ապուր ընդհանուր 500գր՝ 350գր. ապուր, 150գր. հավի փափուկ միս, սպագետտի՝ 250գր., տավարի մսով սոուս՝ 150գր, աղցան «Վինեգրետ»՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ. բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.
4. Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ:
5. Կարտոֆիլե խյուս՝ 200գր., կոտլետ(տավարի մսով)՝ 150գր, լուծվող սուրճ կամ սև և (կամ) կանաչ թեյ՝ 200մլ, թխվածք (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա)՝ 100գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր:
4-րդ աշխատանքային օր
1.Մեկ հատ խաշած ձու և մեկ հատ խաշած հավի նրբյերշիկ, սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ ՝ 200մլ, կարագ (սերուցքային 82% յուղայնությամբ)՝ 30գր, ջեմ (մրգային՝ առնվազն 2 տարբեր տեսակի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
2. Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր.(բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ:
3.Սնկով ապուր ընդհանուր 500գր՝ 350գր. ապուր, 150գր. սունկ, ուզբեկական փլավ հավի մսով ընդհանուր 400գր՝ 250գր. փլավ, 150գր. միս,կաղամբով աղցան՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.
4. Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ:
5. Հնդկաձավարով փլավ՝ 200գր., լանգետ (տավարի մսով) 150գր., լուծվող սուրճ կամ սև և (կամ) կանաչ թեյ՝ 200մլ, թխվածք (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա)՝ 100գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր:
5-րդ աշխատանքային օր
1.Կաթնով՝ 200գր., սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ (սերուցքային 82% յուղայնությամբ)՝ 30գր, ջեմ (մրգային՝ առնվազն 2 տարբեր տեսակի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
2. Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածք՝ 100գր. (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր. (առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ:
3.Ոսպով ապուր՝ 400գր, կարտոֆիլի տապակա՝ 350գր, նրբերշիկ հավի՝ 2 հատ, բազուկով աղցան՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.
4.Սև և (կամ) կանաչ թեյ կամ լուծվող սուրճ ՝ 200մլ, թխվածք՝ 100 գր. (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա), մրգեր՝ 150 գր.(առնվազն մրգի երեք տեսակ), գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ:

5.Վերմիշելով փլավ՝ 200գր., տապակած հավի կրծքամիս 150 գր., լուծվող սուրճ կամ սև և (կամ) կանաչ թեյ ՝ 200մլ, թխվածք (բիսկվիթային խմորից պատրաստված և (կամ) գաթա)՝ 100գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր:

Վերոնշյալ ճաշացանկի ճաշատեսակները (ներառյալ բոլոր տաք ուտեստները և թխվածքները) պետք է պատրաստված լինեն կարագով (սերուցքային՝ 82% յուղայնությամբ), իսկ բաղադրատոմսերը և դրանց պատրաստման հետ կապված այլ հարցերը պետք է համաձայնեցվեն (մինչև դրանց պատրաստումը):

Ծառայողներին տրամադրվող սննդի ճաշացանկի յուրաքանչյուր օրվա ժամանակացույցը կազմվում է հաշվի առնելով տվյալ օրվա դասացուցակի ժամաբաշխվածությունը:

Եթե ծառայողների հատուկ ուսուցման դասացուցակը վեց և ավելի օրերից է կազմված, ապա դասացուցակի 6-րդ աշխատանքային օրից սկսած սույն ճաշացանկը կրկնվում է՝ 1-ին աշխատանքային օրից հաշված: